

ԱՅ կառավարության 2021թ. մարտի 17-ի թիվ 222-Ն որոշմամբ հաստատված «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացություն մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագրի» (այսուհետ՝ ծրագիր) մեջ կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ կետերը.

➤ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո վարկի (փոխառություն) մայր գումարների, տոկոսագումարների և սպասարկման վճարների գծով փաստացի վճարված (մարված) գումարները, պարտատիրոջ կողմից տրամադրված տեղեկանքի հիման վրա և նրանց նկատմամբ կիրառելով ծրագրով նշված սահմանաչափերն ու պայմանները, վերադարձվում են շահառուին մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը՝ նրա բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

➤ Չոհված, մահացած, 1-ին խմբի հաշմանդամություն և ձեռք բերած, անհայտ բացակայող համարվող անձ կամ նրա ամուսին կամ համատեղ ութամբ բնակվող զավակ կամ ծնող հանդիսացող շահառուի վարկային պարտավորությունը 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ժամկետանց լինելու դեպքում աջակցությունը տրամադրվում է վարկի մայր գումարի ողջ մնացորդի և դրա 10 տոկոսը չգերազանցող հաշվարկված տոկոսագումարի չափով, բայց ոչ ավելի, քան 30 000 000.0 ՀՀ դրամը՝ բիզնես վարկային պարտավորությունների դեպքում:

➤ Պատերազմական գործողությունների հետևանքով բռնազավթված համայնքներում

հաշվառված (ամուսիններին ցանկացնում է) և մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը առևձայն վերջին 3 ամիսներին փաստացի բնակված ֆիզիկական անձին (կամ նրա ամուսնուն) կամ փաստացի բնակված ֆիզիկական անձին, ում (ամուսիններին ցանկացնում է) աշխատանքի վայրը գտնվում էր բռնազավթված համայնքներում աջակցությունը տրամադրվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ սպառողական վարկերի մայր գումարների հանրագումարային 10 000 000.0 ՀՀ դրամը չգերազանցող մնացորդի և 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո դրան կատմամբ հաշվեգրված տոկոսագումարների և սպասարկման վճարների հանրագումարի չափով, իսկ վարկային պարտավորությունները 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ժամկետանց լինելու դեպքում՝ վարկի մայր գումարի 10 000 000.0 ՀՀ դրամը չգերազանցող մնացորդի և դրա 10 տոկոսը չգերազանցող հաշվարկված տոկոսագումարի չափով: Բացառություն են կազմում դրամական միջոցների գրավադրմամբ վարկային պարտավորությունները, որոնց մասով աջակցությունը տրվում է սպառողական վարկերի, ներառյալ դրամական միջոցների գրավադրմամբ վարկերի, հանրագումարային առավելագույնը 3 000 000.0 դրամի չափով:

➤ Շահառուի միևնույն վարկատեսակի գծով մեկից ավելի պարտատերերի մոտ վարկային պարտավորություններին մնացորդների առկայություն և դրանց՝ ծրագրով սահմանված համապատասխան սահմանաչափը գերազանցելու դեպքում՝ միաժամանակ հիմնադրամների և ֆինանսավարկային կազմակերպություններին հանդեպ պարտավորություններն են ալու դեպքում՝ աջակցությունն առաջնահերթության կարգով տրվում է

Ֆինանսավարկային կազմակերպությունների հանդեպ պարտավորությունների կատարմանը :

➤ Եթե շահառուները նույն գույքի և (կամ) ակտիվի մասով հանդիսանում են նաև ԱՅ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի թիվ 336-Ա որոշմամբ հաստատված՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառման շահառու, ապա պետական ֆինանսական աջակցությունն առաջնահերթության կարգով ուղղվում է ծրագրի շրջանակում վարկային պարտավորությունների կատարմանը : Արցախի ներդրումային հիմնադրամը ԱՅ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի հարցման հիման վրա տրամադրում է տեղեկատվություն միջոցառման շահառուի՝ ծրագրի շահառու լինելու և ծրագրի շրջանակում նրան տրամադրված (տրամադրվելիք) աջակցության չափի վերաբերյալ :

➤ Ծրագրի շրջանակներում պետական աջակցություն է ցուցաբերվում նաև շահառուների կողմից գրավադրված դրամական միջոցների հանրագումարը 4 մլն ՀՀ դրամը չգերազանցող սպառողական վարկերի մասով՝ համաձայն ծրագրով նշված սահմանաչափի :